ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7

ք. Երևան «02» օգոստոսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն Լ.Պողոսովայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների** (այսուհետ՝ Աշխատանք) կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում և պահանջներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Պայմանագրի N1 հավելվածին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Կատարողն իրավունք ունի Պայմանագրով իրեն վերապահված գործառույթների կամ դրանց մի մասի իրականացումը սահմանված կարգով լիազորել այլ անձի:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ Աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված Աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **430 000 (չորս հարյուր երեսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Մինչև 05.12.2017թ. Պայմանագրի չիրացված մնացորդային գումարն ամբողջությամբ՝ համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն առնվազն 15.12.2017թ. փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում Աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված Աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի Աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի Աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված Աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ Աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի Աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված Աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նոյեմբերի 15-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ ք.Վանաձոր, Վարդանանց 23/159 ՝՝Ինեկոբանկ՝՝ ՓԲԸ Վանաձորի մ/ճ Հ/Հ 205022201763-1001 ՀՎՀՀ 06938925
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Կ. Մկրտչյան (ստորագրություն)	Լ. Պողոսովա (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 02 » օգոստոսի 2017թ. կնքված
«ՀՀԲՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի							կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	71241200/24	***Կապարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը*** 92x60քմ չափերով համայնքային մարզադաշտի (հիմնանորոգման-վերակառուցման) հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման, հանդիսատեսի նստատեղերի և անհրաժեշտ այլ միջոցառումների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: ***Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ*** *Հիմնավորում* ՀՀ 2017թ պետական բյուջե (ՀՀ կառ.27.04.2017թ թիվ448-Ն որ.), ճարտարապետահատակագծային առաջադրանք *Նորմատիվային պահանջներ* - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու	ՀՀ դրամ	430 000	430 000	1	ք.Վանաձոր, Վարդանանց 23/159	Պայմանագրի կնքման օրվանից՝ 30 օրացուցային օր

		և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին> - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք - ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման **կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ:** ***Նախագծման փուլերը*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանի համաձայն: 1. **<u>Աշխատանքային նախագիծ</u>՝** «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» ***Նախագծի կազմը*** **Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) ելակետային տվյալներ – ճարտարապետահատակագծային առաջադրանք, բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝						

		շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ: **Շինարարության կազմակերպման նախագծի շրջանակներում նախատեսել՝** - ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը, - կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, - շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները: ***Այլ պահանջներ*** Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի, Պատվիրատուի, ՀՀ արտակարգ իավիճակների նախարարության, ինչպես նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի ու ՀՀ առողջապահության նախարարությունների հետ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում **ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացության** ձեռքբերում և պարզ փորձաքննության ապահովում, որպես միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտ՝ ըստ կից **հավելված Ա-ի (նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության տեխնիկական բնութագրի):** Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող						

		շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 5 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով: Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագրի կնքման օրվանից՝ **30 օրացուցային օր :**						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

M.P.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Վարդանանց 23/159
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205022201763-1001
ՀՎՀՀ 06938925

Տնօրեն՝

_____ Լ. Պողոսովա
(ստորագրություն)

M.P.

Հավելված Ա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծային աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության

1	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության պարտադիր ապահովման հիմնավորում**
	Փորձաքննությունն իրականացվում է նախագծողի և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջներին և ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենքին համապատասխան:
2	**Փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի ցանկ**
	• Ելակետային տվյալներ */տեխնիկական բնութագիր, տեխնիկական պայմաններ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներաերկրաբանական և շենքի /կամ մասնաշենքի/ տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություններ/,* • Նախագծային փաստաթղթեր */ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, շինարարության և/կամ քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր/,* • Նախահաշվային փաստաթղթեր */Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ/:*
3	**Ծառայության մատուցման տեխնիկական առաջադրանք**
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար պահանջվող լիցենզիան և լիցենզիային կից ներդիրները՝ ՀՀ կառավարության 07.04.2011թ թիվ 510-Ն որոշման համաձայն **<u>Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործունեության լիցենզիա</u> և <u>լիցենզիայի ներդիրներ</u>՝ ըստ ոլորտների** 1. Բնակելի, հասարակական և արտադրական 2. Հիդրոտեխնիկական 3. Էներգետիկ 4. Կապի
	Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում :
	Փորձաքննության միջոցով Աշխատանքային Նախագծի ներքո մշակված 1. գծագրական մասի և մասնագրերի, 2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում:
	Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով:
	Պատվիրատուի (կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նախագծողի) և փորձաքննություն իրականացնողի փոխհամաձայնությամբ պայմանագրային գնի ձևավորում՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կողմնորոշիչ չափաքանակների շրջանակներում:
	Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար փորձաքննության ապահովում՝ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների՝ հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտների դեպքում, օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունների կամ մասնագիտական եզրակացությունների առկայությամբ համալիր փորձաքննության արդյունքներով ամփոփ եզրակացության ներկայացում:
	Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ և (կամ) պարբերաբար խախտումների կատարման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին :

	Եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ. Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝ 1) նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը. 2) ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները. 3) հիմնական նախագծային լուծումների (ՀՀ կառ.19.03.2015թ թիվ 596-Ն որ. կարգի 23-րդ կետով սահմանված դեպքերում՝ նաև նախահաշվային փաստաթղթերի) վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները. 4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է. 5) փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները. 6) քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով: <u>Բացի այդ, հետևյալ ձևակերպումները</u> 1. *Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան,* 2. *Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին,* 3. *Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին նախարարի 29.11.2006 N273-Ն հրամանով ամրագրված պահանջներին,* 4. *Նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ,* 5. *Նախագիծը համաձայնեցված է ՀՀ ԱԻՆ նախարարության տարածքային ստորաբաժանման հետ, այլ պահանջի դեպքում նաև շահագրգիռ համարվող նախարարությունների կամ գերատեսչությունների հետ,* 6. *Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ..... հազ.դրամ նախահաշվային արժեքով:* Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ: ***Ամփոփիչ ձևակերպում.*** 1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին», կամ 2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման», կամ 3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին»:
	Վերը նշված պահանջների չկատարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատժամիջոցների կիրառում (<Վարչական իրավախախտումների մասին > ՀՀ օրենք, ՀՀ կառ.04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> N 526-Ն որ.,)
4	**Ծառայությունների մատուցման ավարտի նախատեսում՝** պայմանագրով նախատեսված ժամկետներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Վարդանանց 23/159
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205022201763-1001
ՀՎՀՀ 06938925

Տնօրեն՝

_____ Լ. Պողոսովա
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 02 » օգոստոսի 2017թ. կնքված
«ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 22)

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/24	ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	430 000	430 000	430 000	430 000	430 000	430 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011012755, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Վարդանանց 23/159
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205022201763-1001
ՀՎՀՀ 06938925

Տնօրեն՝

_____ Լ. Պողոսովա
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 02 » օգոստոսի 2017թ. կնքված
«ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 02 » օգոստոսի 2017թ. կնքված
«ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան « 31 » հուլիսի 2017թ.

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Պողոսովայի, / անձն. AN0635441 տրվ. 30.08.13թ. 018 կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Վանաձոր, Վարդանանց 23/159
ընկերության հասցեն

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 205022201763-1001
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 06938925
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Լամարա Պողոսովա
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 205022201763-1001

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 06938925

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 43 000 / քառասուներեք հազար/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանքի ձևով

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.